



«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

*ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ*

*ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔ*

*Հետազոտության թեման՝ Նորագույն տեղեկատվական
տեխնոլոգիաների ազդեցությունը և դերը սովորողի հոգեբանական
զարգացման գործում*

Առարկան՝ Ինֆորմատիկա

Հետազոտող ուսուցիչ՝ Նազիկ Սարոյան

Ուսումնական հաստատություն՝ Գ.Զոհրապի անվ. Հ. 97 ավագ դպրոց

Երևան 2022

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
Էլեկտրոնային ուսուցում և հիմնական հասկացություններ.....	5
Հեռավար ուսուցման առավելությունները և թերությունները	8
Դպրոցում Էլեկտրոնային ուսուցման գործընթացի կառավարում, տեղեկատվական տեխնոլոգիաների դերը	11
Հեռավար ուսուցմամբ ուսումնական գործընթացի կազմակերպում.....	17
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	19
Օգտագործված գրականության ցանկ	20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտական աշխատանքի նպատակն է՝ գնահատել էլեկտրոնային ուսուցման որակի կառավարումը ավագ դպրոցում:

Հետազոտական աշխատանքի խնդիրներն են՝

հետազոտել կրթության որակի կառավարման գործընթացը հանրակրթական ուսումնական հաստատություններում

վերլուծել և համեմատել ավանդական և էլեկտրոնային ուսուցման որակի կառավարմանը ներկայացվող պահանջները

մշակել էլեկտրոնային ուսուցման որակի գնահատման չափանիշներ և ցուցիչներ

Հետազոտական աշխատանքի օբյեկտը և առարկան՝ հետազոտության օբյեկտը ավագ դպրոցի որակի կառավարումն է:

Հետազոտության առարկա է հանդիսանում էլեկտրոնային ուսուցման որակի կառավարումը դպրոցում:

Հետազոտական աշխատանքի մեթոդաբանությունը՝ ուսումնասիրություն, գնահատում, համեմատական վերլուծություն, մշակում, հարցում:

Հետազոտական աշխատանքի արդիականությունը կայանում է՝ ՀՀ կրթության ոլորտում հաստատուն տեմպերով էլեկտրոնային/հեռավար ուսուցման ներդրումը իր հետ բերում է ուսուցման որակի կառավարման նոր խնդիրներ, որոնք պահանջում են էլեկտրոնային/հեռավար ուսուցման որակի կառավարման համապատասխան չափանիշների և ցուցիչների ձևավորում:

Հետազոտական աշխատանքի կառուցվածքը և ծավալը: Աշխատանքը բաղկացած է բովանդակությունից, ներածությունից, ենթագլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Նյութը ներառում է «հեռավար ուսուցման» հասկացության էությունը և նրա հիմնական բնութագրիչները: Նկարագրվում են «հեռավար ուսուցման» իրականացման համար անհրաժեշտ պայմանները:

Անդրադարձել ենք էլեկտրոնային ուսուցման հիմնական հասկացություններին, առցանց /Online/ և ցանցից դուրս /Offline/ ուսուցման տարբերություններին:

Խոսել ենք էլեկտրոնային ուսուցման գործընթացի կառավարման, տեղեկատվական տեխնոլոգիաների դերի մասին:

Ներկայացվել են էլեկտրոնային ուսուցման արդյունավետության և որակի կառավարման հիմնական նախադրյալները:

Խոսել ենք դպրոցում էլեկտրոնային ուսուցման որակն ապահովող գործոնների մասին: Նկարագրվում են էլեկտրոնային ուսուցման որակ ապահովող բոլոր կարևոր առանձնահատկությունները՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ապահովածություն, կադրային ապահովածություն, կրթության որակի կառավարման համակարգի առկայություն, ուսուցման գործընթացի, ուսումնական գործընթացի կազմակերպում:

Եզրակացությունում ներկայացված են կատարված աշխատանքի արդյունքները, ինչպես նաև առաջարկություններ կապված էլեկտրոնային ուսուցման որակի ներքին կառավարման արդյունավետության գնահատման հետ:

Էլեկտրոնային ուսուցում և հիմնական հասկացություններ

2020 թվականից ի վեր ամբողջ աշխարհում համավարակի տարածման և կտրուկ աճի պայմաններում, ուսումնական գործընթացը հիմնականում կազմակերպվում է հեռավար եղանակով: Հեռավար ուսուցումն իրականացվում է տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության միջոցների լայն կիրառմամբ: Այն կրթական գործընթացը կազմակերպելու որակապես նոր ձև է, որն ենթադրում է նոր մոտեցումներ և հնարավորություններ: Հեռավար կրթություն իրականացնելիս անհրաժեշտ է պահպանել հեռավար ուսուցման հարթակի օգտագործման հիմնական կանոններն ու պահանջները, հստակեցնել ուսումնական գործընթացի կազմակերպման մեթոդները՝ ապահովելով դասավանդման արդյունավետությունը և կրթական վերջնարդյունքները:

Ինչպես արդեն նշեցինք, հեռավար ուսուցումը համակարգված ուսուցման ձև է, երբ սովորողի և սովորեցնողի միջև անմիջական և ոչ անմիջական ուսուցման գործընթացն իրականացվում է հիմնականում տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության միջոցներով:

Վերջին ժամանակներս կրթության մեջ ինտերնետի ներգրավման, առցանց դասընթացների քանակի, դրանց թեմատիկայի, իրականացման տարբեր միջոցների և ընդհանուր ուղղվածության աստիճանական աճը բերեցին առավել ճկուն տերմինի առաջացմանը՝ էլեկտրոնային ուսուցում /e-Learning/: Այն հոմանիշն է այնպիսի տերմինների, ինչպիսին է հեռավար ուսուցումը, ուսուցում համակարգչի կիրառմամբ, ցանցային ուսուցում, վիրտուալ ուսուցում, ուսուցում տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցով կամ ուսուցում ինտերնետի և մուլտիմեդիայի օգնությամբ: Եվրոպական հանձնաժողովը էլեկտրոնային ուսուցումը սահմանում է որպես «նոր մուլտիմեդիա տեխնոլոգիաների և ինտերնետի կիրառում ուսուցման որակի բարձրացման համար՝ ի հաշիվ պաշարների և ծառայությունների հասանելիության, ինչպես նաև գիտելիքների և համատեղ աշխատանքի հեռավար փոխանակման»:

Էլեկտրոնային ուսուցումը ստանդարտացված և դասակարգված էլեկտրոնային ուսուցողական նյութերի և տեխնոլոգիաների, հեռավար ուսուցողական միջոցների,

ինքնուրույն աշխատանքի, էլեկտրոնային նյութերի, անհատական համակարգիչների, միջոցով իրականացվող ուսուցման նոր ձև է¹:

Էլեկտրոնային ուսուցման տեղեկատվական-ուսուցողական միջավայրն իրենից ներկայացնում է համակարգակազմակերպչական համախումբ, տվյալների փոխանցման, տեղեկատվական ռեսուրսների, արձանագրությունների, սարքային-ծրագրային և կազմակերպչական-մեթոդական ապահովվածություն՝ նպատակաուղղված օգտագործողի ուսումնական պահանջների բավարարմանը: Էլեկտրոնային ուսուցումը հանդիսանում է անընդհատ ուսուցման ձևերից մեկը, որը նախանշված է իրականացնելու կրթության և տեղեկատվություն ստանալու մարդու իրավունքը և կարող է հանդիսանալ ավանդական ուսուցման որակի և արդյունավետության բարձրացման լավագույն միջոց² :

Էլեկտրոնային ուսուցման լայն կիրառումը թույլ է տալիս.

Ինտերնետի միջոցով ապահովել էլեկտրոնային դասընթացների ազատ հասանելիություն ցանկացած տեղից, դրանով իսկ ապահովելով հավասար հնարավորություններ կրթություն ստանալու և որակավորման բարձրացման համար:

Արմատապես բարձրացնել կրթության որակը ուսուցման տեմպի և ուսումնասիրվող նյութի ժամանակացույցի անհատականացման ապահովման հաշվին, հնարավորություն ընձեռել համատեղել ուսուցումը աշխատանքային գործունեության հետ, օպերատիվությամբ ընդգրկել նոր գիտելիքները ուսումնական գործընթացի մեջ, ընդգրկել համընդհանուր մատչելի ուսուցողական նյութերի մշակման գործին առավել որակյալ մանկավարժներ և գիտնականներ՝ անկախ նրանց բնակության և աշխատանքի վայրից:

Էժանացնել կրթությունը ծախսերի բաշխման հաշվին, տեխնոլոգիական միջավայրերի և թանկարժեք բովանդակության ստեղծման համար, նվազեցնելով հատուկ տրամադրված ուսումնական տարածքներ ստեղծելու և լրացուցիչ ուսումնամեթոդական գրականության ձեռքբերման անհրաժեշտությունը, կապված այն բանի հետ, որ ծանրության կենտրոնը տեղափոխվի դեպի ինքնուրույն աշխատանքը՝ տանը, աշխատանքի վայրում և ճանապարհին:

Ապահովել կրթության անընդհատությունը և գիտելիքների արդիականությունը, հնարավորություն տալով սովորողին ինքնուրույն ընտրել ուսուցանվող նյութի

¹ Электронное обучение,
http://ru.wikipedia.org/wiki/%D0%AD%D0%BB%D0%B5%D0%BA%D1%82%D1%80%D0%BE%D0%BD%D0%BD%D0%BE%D0%B5_%D0%BE%D0%B1%D1%83%D1%87%D0%B5%D0%BD%D0%B8%D0%B5

² Андреев А.А., 1996г.

շարունակականությունը և տևողությունը՝ հարմարեցնելով ուսուցման գործընթացը իր հնարավորություններին և պահանջներին:

Զգալիորեն բարձրացնել օգտագործվող գիտելիքների արդյունավետությունը տնտեսության մեջ, բնակչության տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների ունակությունների արագ տիրապետման հաշվին:

Բարձրացնել ուսուցման ճկունությունը ի հաշիվ էլեկտրոնային դասընթացի մոդուլների բաժանման:

Ապահովել ժամանակի հետ զարգացման հնարավորությունը ի հաշիվ էլեկտրոնային դասընթացների բովանդակության արագ և ժամանակին թարմացման: Էլեկտրոնային ուսուցման գործածումը պահանջում է բարձրագույն ուսումնական հաստատություններում որակապես նոր դասախոսական կազմ, որոնք տիրապետում են նոր գիտելիքների: Յուրաքանչյուր դասախոս, բացի այն, որ պետք է ունենա իր առարկայի ոլորտում բարձր որակավորում, նաև պետք է ունենա պատրաստվածության բարձր մակարդակ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում:

Էլեկտրոնային ուսուցման ձևերից են հանդիսանում՝

Առցանց ուսուցումը /Online/

համաժամանակյա

տարաժամանակյա

Ցանցից դուրս ուսուցումը /Offline/

Խառը տիպի ուսուցումը /Blended Learning/

Հեռավար ուսուցման առավելությունները և թերությունները

Ներկայումս համացանցի զարգացումը և դրա կողմից առաջարկվող ծառայությունների սակագների արագ նվազումը նպաստում է, որ հեռավար ուսուցումը ոչ միայն մատչելի դառնա քաղաքացիների մեծամասնության համար, այլև ապահովի հեղինակավոր կրթական հաստատություններում ընդհանուր և մասնագիտական անհրժեշտ մակարդակի կրթություն ստանալու հնարավորությունը՝ չդարցնելով գործունեության այլ տեսակները: Հեռավար ուսուցումը կրթությամբ ստանալու և որակավորումը բարձրացնելու լայն հնարավորություններ է ստեղծում հաշմանդամների, երեխաների դաստիարակությամբ զբաղված կանանց, իրենց հիմնական աշխատանքը ընդունելու հնարավորություն չունեցող անձանց, կրթական հաստատություններից հեռու շրջաններում բնակվողների համար: Հեռավար ուսուցումը թույլ է տալիս՝

1. Կրճատել ուսուցման վրա կատարվող ծախսերը (չեն պահանջվում ծախսեր տարածքների վարձակալման, դասադասների և սովորողներին ուսման վայր տեղափոխելու համար),
2. ուսուցումը կազմակերպել ավելի մեծ թվով մարդկանց համար,
3. բարձրացնել ուսուցման որակը ժամանակակից տեխնոլոգիաների, ծավալուն էլեկտրոնային գրադարանների օգտագործման միջոցով:

Համացանցային տեխնոլոգիաները և հեռավար ուսուցումը նոր հնարավորություններ են ստեղծում մասնագետների շարունակական կրթության, վերապատրաստման, երկրորդ մասնագիտություն ստանալու համար, կրթությունը դառնում է ավելի մատչելի:

Հեռավար ուսուցման առավելությունները.

Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառում - Ժամանակակից ծրագրային և տեխնիկական միջոցների կիրառմամբ իրականացվող ուսուցումը էլեկտրոնային կրթությունը դարձնում է ավելի արդյունավետ: Ուսուցման գործընթացը դառնում է ավելի դինամիկ՝ հիմնելով սովորողի և ուսանողի համակարգի ակտիվ թոխգործակցության վրա: Համացանցի մասնավորապես արագ համացանցի

զարգացման, մուլտիմեդիա տեխնոլոգիաների կիրառման շնորհիվ հեռավար ուսուցման դասընթացները դառնում են ավելի լիարժեք և հետաքրքիր:

Ուսուցման մատչելիություն- հնարավորություն է տալիս սովորել բնակավայրից հեռու ողջ կյանքի ընթացքում՝ համատեղելով ուսումը հիմնական գործունեության հետ, առանց հատուկ գործուղումների ու արձակուրդի, ուսման համար օգտագործելով հիմնականում երեկոյան ժամերը և հանգստյան օրերը: Գործնականում սովորել կարելի է երկրագնդի ցանկացած վայրում, որտեղ կա համակարգիչ և համացանց՝ առանց հրավերի, ուղևորության տոմսի և հյուրանոցի անհրաժեշտության:

Ճկունություն և ազատություն, մուտք դեպի որակյալ կրթություն- հնարավորություն է տալիս հեշտությամբ ընտրելու մի քանի լավագույն դասընթաց տարբեր երկրների համալսարաններից: Կարելի է միաժամանակ սովորել տարբեր հաստատություններում և , համեմատելով առաջարկվող դասընթացները, ընտրել լավագույն ուսումնական հաստատությունը, որտեղ կան ավելի բարձր որակավորում ունեցող մասնագետներ և ուսուցման առավել արդյունավետ տեխնոլոգիաներ: Ցանկացած ժամանակ և ցանկացած վայրում սովորելը ուսանողին թույլ է տալիս կազմել անհատական ուսուցման ժամանակացույց:

Անհատական բնույթ - հեռավար ուսուցումն ունի ավելի անհատական բնույթ, քանի որ ունկնդիրն ինքն է որոշում ուսուցման ընթացքը: Նա կարող է մի քանի անգամ վերադառնալ առանձին թեմաների կամ բաց թողնել առանձին բաժիններ: Հեռավար ուսուցման ընթացքում ուսանողը ձեռք է բերում ինքնակրթության հմտություններ և դառնում ավելի ինքնույրույն ու պատասխանատու: Հեռավար ուսուցման գործընթացը դարձնում է ավելի ստեղծագործական և անհատական, որը նպաստում է սովորողի ինքնադրսևորմանը:

Հեռավար ուսուցման թերությունները.

1. Բացակայում է սովորողի և դասախոսի միջև անմիջական հաղորդակցումը:
2. Դժվար է ստեղծել ստեղծագործական մթնոլորտ սովորողների խմբում: Իսկ երբ սովորողի կողքին չկա մեկը, որը կարող է ոգևորել նրան, դա կարող է խիստ բացասաբար ազդել ուսուցման գործընթացի վրա:
3. Հեռավար սովորելու ցանկություն ունեցողներից ոչ բոլորն ունեն անհատական համակարգչի և համացանց, ինչպես նաև տեխնիկական պատրաստվածություն՝ հեռավար ուսուցման միջոցների կիրառման համար:
4. Բարձր պահանջներ է ներկայացվել ուսուցման գործընթացի կազմակերպմանն ու կառավարմանը, բավական բարդ է ունկնդիրներին շարադրելու խնդիրները:
5. Հեռավար ուսուցման հիմնախնդիրներից մեկը գիտելիքների ստուգման ժամանակ սովորողի ինքնությունը պարզելն է: Քանի դեռ չեն առաջարկվել օպտիմալ տեխնոլոգիական լուծումներ, հեռավար ծրագրերի մեծ մասը ենթադրում է առկա քննական շրջան, քանի որ դժվար է ասել, թե ով է կապի մյուս կողմում:

Չնայած նշված թերություններին՝ աշխարհի բազմաթիվ երկրներում հեռավար ուսուցման իրական այլընտրանք է ավանդականին: Դրա հանրաճանանչությանը նպաստում է ավանդականի համեմատ ուսուցման ավելի ցածր արժեքը և անկախ հեռավորությունից, ուսումնական հաստատություն ընտրելու հնարավորությունը:

Դպրոցում Էլեկտրոնային ուսուցման գործընթացի կառավարում, տեղեկատվական տեխնոլոգիաների դերը

Ժամանակակից պատկերացմամբ որակյալ կրթությունը նշանակում է, այնպիսի կրթություն տալ, որը հիմք հանդիսանա տեղեկատվական հասարակությունում ապրելու և ստեղծագործելու համար: Որակյալ կրթություն չի նշանակում միայն խորը գիտելիքների հաղորդում, այլև այնպիսի գիտելիքների և հմտությունների ձևավորում, որոնց անհրաժեշտությունն առաջ է գալիս կոնկրետ տեղեկատվական հասարակության մեջ: Հարցը կայանում է հենց նրանում, թե կարող են արդյոք ժամանակակից համալսարաններն, իրենց վարչական կառուցվածքով, ենթակառուցվածքներով, համալրմամբ, կադրային կազմով լուծել նշված խնդիրները:

Տարբեր ուսուցիչներ այս հարցի առնչությամբ տարբեր մոտեցումներ ցուցաբերեցին՝ կախված տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների ոլորտում ունեցած գիտելիքից և փորձից: Այդ տեսանկյունից, նախկինում ուսուցիչներին հասանելի և ուսուցիչների կողմից կիրառվող տեղեկատվական համակարգերից զատ (*dasar.am, ktak.am, armedu.am, «Քան»* ակադեմիայի դասընթացներ, «Պաշարների շտեմարան» և այլն) տեղեկատվություն ձեռք բերեցինք առցանց հարթակում հեռավար կրթությունը խթանող բազմաթիվ ծրագրերի մասին: Մասնավորապես, մենք օգտվեցինք *Dasaran.am*-ի ստեղծած հնարավորություններից, «Իմ դպրոցը» կայքից, Ռուզաննա Ստեփանյանի կրթական արհեստանոցից և այլն՝ հաղորդակցության համար անհրաժեշտ գործիքների մասին տեղեկատվություն ձեռք բերելու, հեռավար կրթությունն արդյունավետ կազմակերպելու և այլ նպատակներով:

Որպես աշակերտների հետ հաղորդակցության գործիքներ ընտրվեցին *Zoom*-ը և *Viber*-ը: *Viber* հավելվածում ստեղծվել էին դասարանների խմբեր (այդ խմբերում ներառված էին աշակերտները և նրանց ծնողները): Դասարանների խմբերում դրվում էր *Zoom* ծրագրի՝ դասապրոցեսին միանալու հղումը: Աշակերտներին տրվում էին հանձնարարություններ, որոնք նրանք տանը պետք է կատարեին, այնուհետև ուղարկեին տնային աշխատանքն ուսուցչին *Viber* հավելվածի միջոցով՝ անհատական նամակով: Ուսուցիչը ստուգում էր աշակերտի կողմից կատարված հանձնարարություններն ու պատասխանները, դիտարկում էր թերացումները և

ուղղում սխալները: Աշակերտների մոտ հարցեր լինելու պարագայում համապատասխան քննարկում էր կազմակերպվում:

Փորձը ցույց է տալիս, որ ավանդական ուսումնական հաստատություններին անհրաժեշտ են փոփոխություններ և իրականացնել դրանք բացառապես արհեստավարժ կրթական հասարակության ուժերով հնարավոր չէ: Կրթական համակարգը ժամակակից պահանջներին համապատասխանեցնելը պետք է գիտակցվի որպես ազգային նպատակ, որի իրականացման համար, հասարակությունը և պետությունը պետք է դրսևորեն քաղաքական կամք, կենտրոնացնեն նյութական և մտավոր միջոցները:

Դպրոցի առաջնային խնդիրը կայանում է նրանում, որ բացատրեն հասարակությանն ընդհանուր առմամբ և նրա քաղաքական ղեկավարությանը, չբացառելով նաև կրթական ոլորտի ղեկավարությանը, ձևավորվող գիտական հասարակության խնդիրներն ու պահանջները: Մարդկանց, ուսանողների զարգացմանն ուղղված ներդրումները, ուսուցման ամենասկզբնական փուլում հանդիսանում են որոշիչ գործոն մասնագետների պատրաստման որակի համար: Դրա մեջ մտնում են և դասավանդողների աշխատավարձը, և լաբորատոր բազայի զարգացմանը, ինչպես նաև համալսարանների նորարարական համակարգի զարգացմանն ուղղված ներդրումները:

Բացի այդ, առանց մարդկային կապիտալի մեջ բավարար ներդրումներ անելու, անհնար է զարգացնել նաև էլեկտրոնային ուսուցումը, քանի որ այն բավական թանկ կրթություն է, և առանց լուրջ կապիտալ ներդրումների, այդ թվում նաև մարդկային, արդյունքների հասնելը բավականին դժվար է:

Աառաջնային հանդիսանում է այն, որը պետք է կարողանա անել ժամանակակից մարդը՝ նոր գիտելիքների ստեղծումն է: Դպրոցների խնդիրը ավելի ու ավելի շատ կայանում է ոչ միայն նրանում, որ ուղղակի իրենց ուսանողներին հաղորդեն գոյություն ունեցող գիտելիքների համալիրը, թեկուզ և ամենաառաջադեմ և պահանջված, ոչ միայն ինչ-որ ոլորտի մասնագետների թողարկումն է, որոնք լավ են պատրաստված և շատ գիտելիքներ ունեն: Հարկավոր է ոչ միայն ուսուցանել ուսանողներին տվյալների և տեղեկատվության ծովից, որն այսօր գոյություն ունի համացանցում, այլ պահոցներում և գրադարաններում, քաղել գիտելիքներ:

Տեղեկատվական հասարակության շրջանակներում, համալսարանը պետք է սովորեցնի ստեղծել գիտելիքներ: Իսկ դրա համար անհրաժեշտ է ավելի շատ համակցել համալսարանների գործունեության ուսուցողական և գիտական կողմերը, առավելագույնս որոնել ստեղծագործ օժտված երիտասարդների, խթանել նրանց հետաքրքրությունը գիտության և արվեստի նկատմամբ, զարգացնել նրանց ընդունակությունները:[12]:

Ներկայումս էլեկտրոնային ուսուցումը ավելի իմաստավորված է և զուտ տեխնոլոգիական մոտեցումը փոխվել է այն տեսանկյունով, որ էլեկտրոնային ուսուցումը պետք է հանդիսանա կրթական գործընթաց՝ տեխնոլոգիական աջակցությամբ: Ուսանողները պատկանում են այն խմբին, որտեղ պահպանվում է կապը սովորողի և սովորեցնողի միջև: Նախկինում արդիական թեմաները, կապված ենթակառուցվածքների հետ, ներկայումս պակաս արդիական են և զիջել են իրենց տեղը դասավանդման որակին, բովանդակությանը, չափորոշիչներին, դասավանդողների ուսուցմանը և կազմակերպչական փոփոխություններին: Աշխարհի շատ երկրներ սկսել են ներդրումներ կատարել իրենց կրթական համակարգերում ազգային մակարդակում. ներդրումներ ենթակառուցվածքում, նոր ծառայությունների և բովանդակության ասպարեզում, ինչպես նաև մարդկային և տնտեսական ռեսուրսներում՝ նպաստակ ունենալով ստեղծել առցանց և հեռակառավարվող ծրագրեր:

Այսպիսով, ավելի շատ փորձ է կուտակվում էլեկտրոնային ուսուցման ասպարեզում, և որ ավելի կարևոր է գործընթացի մեջ ընկերկված զանազան մասնակիցների համար, լինեն դրանք կրթական կազմակերպություններ, թրենդինգային ընկերություններ կամ ուսանողներ, հնարավորություն է ստեղծվում գնահատել տեխնոլոգիաների գործածմամբ անցկացվող դասընթացի որակը, և հատկապես նրա արդյունավետությունը[12]:

Տեղեկացված հասարակության ձևավորման անհրաժեշտությունը պահանջում է կրթության արմատական փոփոխություններ: Այսինքն, անցումը դասական համակարգերից, որոնք հիմնված են կանոնակարգված հիմնարար գիտելիքները ուսումնասիրող դիսցիպլինների վրա, անձի շարունակական կատարելագործման գործընթացին՝ նրա մասնագիտական գործունեության ամբողջ ընթացքում:

Շարունակական կրթության գլխավոր գործիքը սկսած դպրոցից, պետք է դառնա էլեկտրոնային ուսուցումը: Այսօր գոյություն ունի էլեկտրոնային ուսուցման բազմաթիվ տեխնոլոգիաներ, այդ թվում, նաև անվճար: Առաջին հերթին համացանցն է և տարբեր տեղեկատվական աղբյուրներից օգտվելու հնարավորությունը, սոցիալական փոխազդեցությունների նոր տիպերը:

Էլեկտրոնային ուսուցման մեխանիզմները օգտագործում են նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաներ /SS/ և կարիք ունեն նույնպիսի նորարարական մոտեցումների կրթության կառավարման ոլորտում:

Այդ կապակցությամբ անհրաժեշտ է հատուկ նշել երրորդ սերնդի նորագույն կրթական ստանդարտների դերը, որոնք պետք է ապահովեն ժամանակակից կրթության որակը: Նորագույն ստանդարտները հիմնված են իրազեկ մոտեցումների և ուսուցման նորարարական տեխնոլոգիաների կիրառման վրա:

Այս մոտեցումների իրականացումը ենթադրում է ուսումնական գործընթացում պարապմունքների անցկացման ակտիվ և ինտերակտիվ ձևերի լայն կիրառում՝ SS-ի համակցությամբ՝ դասերից դուրս գիտահետազոտական աշխատանքով, որը նպատակ ունի ձևավորել և զարգացնել ուսանողների մասնագիտական հմտությունները, ուսումնառության առանձնահատկությունները:

Համեմատաբար մեծ է այնպիսի գիտելիքների տեսակարար կշիռը, որոնք նախատեսված են մագիստրոսական ծրագրերով անցնելուն:

Ժամանակակից կրթության որակի ապահովման մեջ գլխավոր դերը պատկանում է կառավարման հետևյալ գործընթացներին.

Էլեկտրոնային ուսուցման համակարգում տեղեկատվական ռեսուրսներին /պաշարներին/, որոնք պիտի ապահովեն հիմնական իրազեկման հիմունքները մասնագիտական գործունեության խնդիրներին և հիմնական կրթական ծրագրերի նպատակներին համապատասխան

կոնկրետ անձի իրազեկությամբ ընտրված առարկաների հավաքածուի յուրացման մակարդակը

SS-ի օգնությամբ ինքնուրույն ձեռքբերումների գործընթացով և գիտելիքների ու հմտությունների պրակտիկ կիրառմամբ, այդ թվում նոր գիտելիքների ոլորտի ընդլայնում և գիտական աշխարհայացքի խորացում:

Կրթության որակի ապահովումը ժամանակակից ՏՏ-ի հիման վրա հրատապ խնդիր է: Դրանց հիմքում ընկած են մշակված մեթոդներ, որոնք դուրս են բերվել չդասակարգված տեքստային տեղեկատվությունից:

Տեղեկատվական ռեսուրսների կառավարում

Որպես տեղեկատվական ռեսուրս, որը հանդես է գալիս որպես գիտելիքի աղբյուր և պետք է ենթարկվի վերլուծության և կառավարման, օգտագործվում են էլեկտրոնային տեքստային նյութեր՝ մեթոդական նյութեր, դասագրքեր, ձեռնարկներ, և այլն:

Գիտաարտադրական և գիտահետազոտական ոլորտներում, իրազեկության զարգացման համար ստացված գիտելիքները՝ մենագրություններ, գիտատեխնիկական հաշվետվություններ, գիտական հոդվածներ, կարող են օգտագործվել որպես էլեկտրոնային տեղեկատվական ռեսուրսներ:

Ուսուցման նոր որակի ապահովման համար բավական չէ միայն սովորողի աշխատասիրությունը և ընդունակությունները: Ինչ որ չափով ուսուցման գործընթացի հաջողությունը որոշվում է նաև ուսուցման համակարգի բովանդակության որակից և քանակից, որը կապահովի այս կամ այն իրազեկության ստացումը: Այնուհանդերձ չհամակարգված տեքստային տեղեկատվության հսկայական ծավալներում, որը տեղեկացված է էլեկտրոնային ուսուցման թվայնացված պահոցներում և էլեկտրոնային գրադարաններում, համացանցի թեմատիկ կայքերում, բացակայում են վերլուծության որակական գործիքները: Չկա հնարավորություն որոշելու մի քանի բովանդակային տվյալ, որը կապահովի անհրաժեշտ իրազեկության տիրապետումը: Չի օգտագործվում համացանցի պաշարների վերլուծության հնարավորությունները թեմատիկ Web պաշարներից և էլեկտրոնային գրադարաններից արդիական տեղեկատվության թվայնացվող պահոցների համալրման և անհրաժեշտ իրազեկություն ստանալու համար:

Տեղեկատվական պաշարների վերլուծության համապատասխանեցումը շրջանավարտի որոշակի կրթական ծրագրի իրազեկության մոդելին կատարվում է ծրագրային և մաթեմատիկական գիտելիքների ձեռքբերման մշակված մեթոդների հիման վրա:

Իրազեկության ցանկը այն հիմքն է, որից ելնելով կատարվում է տեքստի վերլուծություն, վեր են հանվում տեքստի այն դրվագները, որոնք ծածկում են այս կամ այն իրազեկությունը և հարաբերակցությունը:

Առաջարկված տեխնոլոգիաները համակարգին թույլ են տալիս դասակարգել բովանդակությունը և ընդհանուր իրազեկությունը՝ գոյություն ունեցող բովանդակության մոնիտորինգի միջոցով և անհրաժեշտ իրազեկության ծածկույթի որոշման աստիճանով, դրա նպատակային փոփոխությամբ և կիրառել որպես վերլուծական համակարգ արդեն գոյություն

ունեցող արդիական բովանդակությունների կամ ըստ անհրաժեշտության դրան փոփոխման վերաբերյալ որոշումներ կայացնելու համար³:

Դպրոցներում էլեկտրոնային ուսուցման հաջող ներդրման հիմնական չափորոշիչներն են հանդիսանում.

Տեխնոլոգիաները և պրոֆեսորադասախոսական կազմը,

բովանդակության որակը և նրա համապատասխանությունը սովորողների և սովորեցնողների պահանջներին,

սովորողների մոտիվացիան,

սովորողների ինտերակտիվությունը և աջակցումը:

Անհրաժեշտ է ընդհանուր առմամբ դպրոցներում ներդնել կառավարման նոր ձևեր և մեթոդներ, հեռանալ հիերարխիկ կառուցվածքներից և անցնել բազմաչափ կառուցվածքների, գործընթացային կառավարման շրջանակներում իմիտացիոն մոդելավորված գործընթացների: Ընդհանուր առմամբ դպրոցի ամբողջ աշխատանքը պետք է կենտրոնացված լինի ուսանողի շուրջը:

Էլեկտրոնային ուսուցման մեջ որակի ներքին ապահովումն ու պահպանումը այնքան էլ պարզ խնդիր չի հանդիսանում, քանի որ տվյալ դեպքում գործ ունենք մարդկային գործոնի հետ, ոչ թե միայն արդյունաբերական արտադրանքի: Ի սկզբանե պետք է ընտրել որակի նկատմամբ մոտեցումը, այնուհետև պարամետրերը և /կամ/ ցուցիչները այն բանի համար, որ հետագայում հնարավոր լինի գնահատում կատարել[12]:

³ Статьи, <http://ru.education.mon.gov.ru/articles/71/>

Հեռավար ուսուցմամբ ուսումնական գործընթացի կազմակերպում

Կազմակերպություններում ձևավորվում են առանձին ուսումնական խմբեր, որոնցում ընդգրկված սովորողների թիվը սահմանվում է կազմակերպության ռեկտորի/տնօրենի հրամանով: Հեռավար ուսուցումը կազմակերպվում է առաջին կիսամյակից: Հեռավար ուսուցումը կազմակերպվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբում կազմված և կազմակերպության գիտական խորհրդի կողմից հաստատված ժամանակացույցին համապատասխան: Ուսումնական գործընթացի ժամանակացույցը կազմվում է յուրաքանչյուր կիսամյակի կամ ուսումնական տարվա համար՝ ուսումնական պլանի հիման վրա: Ուսումնական պլանում նշվում են ուսումնասիրվող առարկանները, մոդելները, յուրաքանչյուր առարկայի հատկացված ժամաքնակը: Ուսումնական գործընթացի կազմակերպման հիմքը տվյալ կրթական ծրագրի ուսումնական պլանն ու առարկայական ծրագրեր են:

Հեռավար ուսուցումը կազմակերպվում է ուսումնական պլանին և առարկայական ծրագրերին համապատասխան, որոնց բոլոր պահանջները կատարած սովորողին ամփոփիչ ատեստավորումից հետո հանձնվում է համապատասխան ավարտական փաստաթուղթ: Հեռավար ուսուցումը հիմնականում կազմակերպվում է սովորողների և դասախոսների տարածապես անջատ պայմաններում:

Սովորողներ համար յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբում կարող է կազմակերպել կարճատև դասընթաց, որի ընթացքում նրանք ծանոթանում են համապատասխան կրթական ծրագրի ուսումնական պլանին, առարկայական ծրագրերի բովանդակության, ատեստավորման ձևերին ու կարգին, կազմակերպության հետ կապված ձևերին սովորողի իրավունքներին ու պարտականություններին: Կարճատև դասընթացի տևողությունը չի կարող գերազանցել մեկ շաբաթը:

Սովորողներն ուսումնական տարվա յուրաքանչյուր կիսամյակի սկզբին դասադոսներից ստանում են տվյալ կիսամյակի համար ուսումնական պլանով նախատեսված առարկաների ինքնուրույն ուսումնասիրման համար անհրաժեշտ ուսումնամեթոդական փաստաթղթերի որոնք տրամադրվում են թղթային կամ էլեկտրոնային եղանակով, ինչպես նաև համացանցով: Սովորողի հետ կապված էլեկտրոնային միջոցներով իրականացվելու դեպքում յուրաքանչյուր սովորողի համար կազմակերպությունում բացվում է անհատական էջ՝ համապատասխան ծածկագրով:

Այլ միջոցներով կապն իրականացվելու դեպքում կազմակերպությունը սահմանում է կապի իրականացման որոշակի պայմաններ: Տեղեկատվական բազայի օգտագործման

կարգն ու ձևը սահմանում է կազմակերպությունը; Հեռավար ուսուցման կազմակերպման մեթոդական հիմքը փաթեթային համացանցային և տեղեկատվության փոխանցման հեռահաղորդակցային նոր տեխնոլոգիաներ են⁴:

⁴ Публикация, <http://www.hypermethod.ru/static.php?id=105050>

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հեռավար ուսուցման ընթացքում կարևոր է ոչ միայն տեղեկատվական տեխնոլոգիաների և համացանցի առկայությունը, այլև՝ ուսուցման գործընթացի ճիշտ և արդյունավետ կազմակերպումը, որն իրականացվում է ուսուցչի կողմից: Մանրամասն ուսումնասիրել ենք դպրոցներում կրթության որակի ներքին ապահովման գործընթացը, քանի որ դրանով էր պայմանավորված ներդրված էլեկտրոնային ուսուցման որակի կառավարման գործընթացը:

Հետազոտությունը ցույց տվեց, որ էլեկտրոնային ուսուցումը լինելով ուսուցում հիմնված մեդիա տեխնոլոգիաների վրա առաջնորդվում է ըստ մասնագիտությունների սահմանված այդ մասնագիտությունների համար հաստատված պետական կրթական չափորոշիչներով:

Հեռավար կրթության ներմուծումը համավարակի շրջանակներում բավականին բարդ գործընթաց էր, որին, կրթական համակարգը դեռևս պատրաստ չէր թե՛ գործընթացն անխափան կազմակերպելու անհրաժեշտ գործիքակազմին տիրապետելու առումով, թե՛ առհասարակ կրթությունը նման ձևով կազմակերպելու առանձնահատուկ հմտություններին չտիրապետելու առումով: Սակայն, գործընթացի անխափան կազմակերպումն ապահովելու համար ակտիվացան փոխօգնության մեխանիզմները: Հատկապես նշանակալի էր ՏՀՏ (տեղեկատվական հաղորդակցության և տեխնոլոգիաների) ոլորտի մասնագետների պատրաստակամությունն օգնելու ուսուցչին: Նրանք ներկայացրեցին և տրամադրեցին գործիքներ, կազմակերպեցին և իրականացրեցին առցանց դասընթացներ ուսուցիչների համար:

Առաջարկություն

հետազոտել կրթության որակի կառավարման գործընթացը բարձրագույն ուսումնական հաստատություններում

վերլուծել և համեմատել ավանդական և էլեկտրոնային ուսուցման որակի կառավարմանը ներկայացվող պահանջները

մշակել էլեկտրոնային ուսուցման որակի գնահատման չափանիշներ և ցուցիչներ

Օգտագործված գրականության ցանկ

Электронное обучение,

http://ru.wikipedia.org/wiki/%D0%AD%D0%BB%D0%B5%D0%BA%D1%82%D1%80%D0%BE%D0%BD%D0%BD%D0%BE%D0%B5_%D0%BE%D0%B1%D1%83%D1%87%D0%B5%D0%BD%D0%B8%D0%B5

Андреев А.А., 1996г.

http://elearning.itcenter.am/file.php/1/.../tema-1-haskacutunneri_aknark.doc

Статьи, <http://ru.education.mon.gov.ru/articles/71/>

Публикация, <http://www.hypermethod.ru/static.php?id=105050>